

Համկետ ՄԱՐԳՍՅԱՆ, Արաաշես ԲՈՅԱԶՅԱՆ

**ԳՅՈՒՄՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՄԱՆ ՓՈՐՉ
(1990-2000թթ.)**

Վերջին տարիներին Գյումրու քնակչության աշխատանքային ռեսուրսների էթնո և անասաաշխարհագրական ամբողջական եետագոտություն չի կատարվել: Մինչ- դեռ քնակչության աշխատանքային ռեսուրսների, սոցիալ-մասնագիտական կազմի, կենսապահովման ձևերի ուսումնասիրությունը ոչ միայն ճանաչողական, այլև գիտա- կիրառական կաթևը նշանակություն ունի:

Խորհրդային տարիներին Հայաստանի աշխատանքային ռեսուրսներ անվան տակ հասկացվում էր քնակչության՝ 16-59 տարեկան աշխատունակ տարիքի տղա- մարդիկ և 16-54 տարեկան կնուայք, իսկ Հայաստանի հանրապետությունում՝ 16-63 տարեկան աղամարդիկ և 16-58 տարեկան կնուայք, չհաշված ցելեկային ուսուցման մեջ ընդգրկված երիտասարդությունը և եաշմանդամներին: Աշխատունակ տարիքի սանդղակի բարձրացումը ներկայումս եանպապեատության պետական այրերը րացաա- րում են կյանքի միջին րարձր ակողությանը: Վիճակագրության նախարարության 2000թ. տղաաունական տվյալներով, կնուանց հումար կյանքի սպասելի ակողությունը 78 տարի է, իսկ աղամարդկանց համար՝ 72¹, այն դեպքում, երբ ՄԱԿ-ի 1995թ. «Մարդ- կային զարգացման զեկույց»-ում Հայաստանի քնակչության կյանքի սպասելի ակող- րությունը 71.2 տարի է, ընդ որում տղամարդկանց համար՝ 67.9, իսկ կանանց՝ 74.4 տարի²: Մեր կարծիքով վերջին տվյալներն իրականությանը ավելի մոտ են:

Գյումրու աշխատանքային ռեսուրսների կազմավորման միջուկը 19-20-րդ դարի- րում Արևմտյան Հայաստանից՝ հիմնականում Էրզրումի նահանգից և Կարսի մարզից զաղթած ուրիեստավորներն ու առևտրականներն էին: Իսկ խորհրդային տարիներին քաղաքի աշխատանքային ռեսուրսների կազմը փոփոխության ենթարկվեց զերա- զանցապես Լենինականի զավսաի և Տրավախքի գյուղական բնակավայրերից զաղ- քած բնակչության, ինչպես նաև հայրենաղարձության հաշվին:

Սպիտակի երկրաշարժը և 90-ակնսն թվականների սկզբներից Հայաստանի հան- րապեսաության իրականացվող սոցիալ-տնտեսական տեղաշարժերը կտրուկ փոփո- խության ենթարկեցին Գյումրու աշխատանքային ռեսուրսների կազմը և զրաղ- վածության բնույթը: 1990-2000թթ. Գյումրու աշխատանքային ռեսուրսների կառուց- վածքի և զրաղվածության վյա ազող գործոնները րազմազան ու աարարնույթ են: Դրանցից կարելի է ուտանձնուցնել ժողովրդագրականը, սոցիալ-անասականը, քաղա- քականը, բնաաշխարհագրականը և այլն:

Մինչև այժմ վավին ճշաված չէ, թե Սպիտակի երկրաշարժից աշխատունակ աա- րիքի որքան մարդ է զոելիլ: Աշխարհագեա Խ. Ավհաիսյունը գրում է. «Գյումրի քա- ղաքում զոելիլ է 10286 մարդ, սակայն քաղսովհաի նախազահ Կ. Համրաղձումյանի հետ գրույցի ժամանակ պարզվել է, որ մինչև 1989թ. հուլիսի 1-ը զոելիլ րնդհանուր թի- վը եղել է 13101մարդ»³: Սպիտակի երկրաշարժից զոելված աշխատունակ քնակչու- րյան թվի ճշգրաումը հետագա ուսումնասիրությանը թողնելով՝ քննության առնենք Գյումրու քնակչության տարիքային կազմի փոփոխությունը 1982-2000թթ:

¹ Շիրակի մարզի վիճվարչության տվյալներ, 2000թ:

² ՄԱԿ-ի Հայաստանի գրասենյակի Մարդկային զարգացման զեկույց, եր, 1995, էջ 10:

³ Խ. Ա. Վ. ե. տ. ի. ս. յ. ա. ն., Սպիտակի երկրաշարժի զոաու քնակչության միզրացիայի վերլուծությունը, Լրարեր հասարակական գիտությունների, եր., 2000, էջ 124:

Աղ. 1. Գյումրու մշակական բնակչության աարիքային խմբերի փոփոխության շարժը 1982-2000թթ.

բնակչության տարիքային խմբերը	1982թ ⁴		2000թ ⁵	
	հազ. մարդ	ընդ. բնակչության առկասը	հազ. մարդ	ընդհանուր բնակչության առկասը
մինչաշխատունակ 0-15 տարեկան	56.2	24.5	51.7	24.4
աշխատունակ 16-54 տարեկան	136.3	64.5	129	60.9
կենսաթոշակառու 55 տարեկանից բարձր	22.3	11.0	30.9	14.7
ընդամենը	214.8	100	211.6	100

Աղյուսակից երևում է, որ Գյումրիում 1982թ. կենսաթոշակառուները կազմում էին բնակչության ընդհանուր թվի 11%-ը, իսկ 2000թ.՝ 14.7%-ը, սակայն բնակչության առկա թվի դեպքում՝ 22.5%-ը⁶: Համեմատելու եամար նշենք, որ զարգացած երկրներում (Անգլիա, Շվեդիա, ԱՄՆ և այլն) կենսաթոշակառուները կազմում են բնակչության ընդհանուր թվի 16%-ից ավելին, ինչը խոսում է բնակչության «ծերացման» մասին⁷: Մեր հանրապետությունում 2000թ. եռմվարի 1-ի դրությամբ ունենք աշխատունակ տարիքից ցածր՝ 27%, աշխատունակ տարիքի՝ 62% և աշխատունակ տարիքից բարձր՝ 11% բնակիչ⁸: Մեր կարծիքով, եթե զարգացած երկրներում բնակչության ծերացման գործընթացը ժողովրդագրական բնակչունդ զարգացման ետևանք է, ապա Հայաստանում, մասնավորապես Գյումրիում բնակչության ծերացման մասն միտումները պայմանավորված են աշխատունակ բնակչության զուգակցման յին արտագաղթով: Մեր հաշվարկներով, վերջին աասը աարիքների ընթացքում Գյումրիում արտագաղթողների թիվը եասնում է մոտ 90 հազարի, որից 72.6 հազարը աշխատունակ տարիքի են⁹:

Ինչպես ասվեց վերևում, աշխատանքային ռեսուրսները կազմում են բնակչության աշխատունակ մասը: Գյումրու 2000թ. աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը ներկայացվում է ետևևյալ աղյուսակում:

Աղ. 2. Գյումրու առկա բնակչության աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը 2000թ վերջերին

	բնակչության թիվը	
	(հազ. մարդ)	(տոկոսներով)
Գյումրու առկա բնակչությունը քաղաքում առկա աշխատունակ բնակչության թիվը	138	100
այդ թվում՝	65.6	47.5
տնտեսության մեջ	16.2	24.6
գործազուրկներ	29.0	44.2
անեաա ձեռներեցներ	1.4	2.1
գործարարներ	2.6	3.9
ուսանողներ	4.5	6.8
և այլք	11.9	18.4

Աղյուսակից երևում է, որ աշխատունակ բնակչության մոտ կեսը գործազուրկներ են, տնտեսության աարքեր ոլորաներում ներգրավված է առկա բնակչության ընդամենը 14.5%-ը: Գյումրու զբաղվածության աարածքային կենտրոնի ավյալներով 2000թ. նոյեմբերին եաշվածման էին կոնգնած մոտ 29 հազ. աշխատանք վնտրող

⁴ Հ Գ արի ե լ յ ան, Լենինական, Եր., 1984, էջ 39:

⁵ Շիրակի մարզային վիճակագրության տվյալներ, 2000թ:

⁶ ՇՊՄԺ Մհանրապետական գիտաժողովի գեկուցումների եիմնադրույթներ, Գյումրի 2000, էջ 49:

⁷ С.К а р а п е т я н, Р. О в с е п я н, Региональные особенности социально-демографического развития Армянской ССР, Եր., 1984, սր.61.

⁸ ՀՀ վիճակագրական վարչության անդեկագիր, Եր., 1999:

⁹ Ա. Բ ո յ ա ջ յ ան, Դաշտային էթնոաշխարհագրական նյութեր, (հեաայու՝ ԴԷՆ) քերթ 1:

անձիք, նրանցից 21388 կամ 69.2% կուսնայք էին: Գործազուրկի կարգավիճակ ունեին 26862 մարդ, գործազուրկ կուսնաց 55%-ը 25-35 տարեկան էին:

Որոշ եղիմակներ տաբբերում են գործազրկության կինգ տեսակ. դրանք են՝ ֆրիկցիոն կում շփումնալին, կառուցվածքալին, ինստիտուցիոնալ, փուլալին և կոմա-վոը¹⁰: Կառուցվածքալին և շփումնալին գործազրկության միջև տարբերությունը կա-յանում է նրանում, որ կառուցվածքալին խմբին պասկանող գործազուրկը պարտա-դիր որևէ մասնագիտական վերապատրաստում պետք է անցնի: 2000թ. ընթացքում աշխատանքի տեղավորված 524 գյուղացիներից միայն քսանն է մասնակցել մասնա-գիտական դասընթացների¹¹: Ինստիտուցիոնալ և փուլալին գործազրկությունը բնորոշ է այն երկրներին, որտեղ սիրում է սոցիալ-անտեսական և քաղաքակրթական ճգնաժամ¹²: Ինստիտուցիոնալ և վուլսլին գործազրկության պայմաններում իշխանությունների, տեղի և արտասահմանյուն եասարակտկան բարեգործական կազմակերպությունների կողմից հատկացվող դրամական ու նյութական միջոցները ուղղվում են բնակչության սոցիալապես անապտեռոլ խավին: Մեր կործիքում, նպաստների եատկացումը գոր-ծազուրկների որոշ մասին եետ պտեռում աշխատանք փնարելուց: Պաշտոնական վիճակագրության ավալների համաձայն 1996թ. գործազուրկների միայն 20% է աշխատանք փնարել: Հեաևաբար գործազուրկներին, սոցիալապես անապտեռոլ ըն-տանիքներին դրամական նպաստների եատկացումը եիմնախնդիրների լուծում չէ, ավելին, այն սրում ու վատթարացում ամկս սոցիալ-անաեսական իրավիճակը: Գյուղրու զբաղվածության տարածքալին կեանքում ավալներում 2000թ. սկզբից մինչև նոյեմբեր գործազուրկի կարգավիճակ ունեցող 26.8 եազ. մարդուց նպաստառուների թիվը 431 է, որից դրամական նպտոռ են ստացել 422-ը՝ մեկ գործազուրկի եաշվով միջինը 3500 դրամ: Ըիշտ է, դրումական նպաստի եատկացումը թերևս արդարացված է կարճաաև ժամանակահատվածի եամուր, սակսյն ոչ ավելին, քանի որ աշխատու-նակ բնակչությունը, զտնվելում ինստիտուցիոնալ և փուլալին գործազրկության մեջ ու «Փարոս» ծրագրում, զբաղվածության կենարոնից և այլ կազմակերպություններից ստանալով դրամական արբեր տեսակի նպտտներ, բացառված չէ. որ եայանվի կամավոր գործազուրկների լամբում: Յուրաքանչյուր երկրում գործազուրկների մեծ թիվը զգալի վնաս է եասցնում ոչ սրայս բնակչության կենսամակարդակին, այլև պետությունից լրացուցիչ ծախսեր են պաեանվջում սոցիալական սրությունը մեղմեյո եամաբ: Աղյուսակ 3-ում ներկայացնում ենք Գյուղրու աշխատունակ բնուկչության և գործազուրկների թվի փոփոխություն շարժընթացը 1992-2000թթ. Աղյուսակից երևում է, որ 1992թ. աշխատունակ բնակչության թիվը 120 եազ. է, իսկ գոլծազուրկների թիվը չորս եազար: Հեաագա արըիներին Հայաստանի եանբապեաությունում իլականաց-վող սոցիալ-անտեսական վերափոխումները, ձեռնարկությունների մասնավորեցումը, Լներգեաիկ ճգնաժամը, արաադրաանտեսական կապերի խզումը եանրուպետության և նախկին միոթենական ձեռնարկությունների սրջև, շրջափակումը, ղեռնափոխա-դրումների կարուկ թանկացումը եանգեցրեցին այն բանին, որ 2000թ քաղաքի աշխա-ատունակ բնակչության թիվը աստիճանարար նվազեց ու եասավ 65.6 եազարի իսկ գոր-ծազուրկների թիվն աճեց 7.2 անգամ:

1992-2000թթ. Գյուղրու աշխատունակ բնակչության և գործազրկության շարժը կարելի բաժանել երեք փուլի.

Առաջին փուլն ընդգրկում է 1992-94թթ., երբ աշխատունակ բնակչության թիվը նվա-զել է 49 եազարով, իսկ գործազուրկների թիվն ավելացել է 9 եազարով: Աշխատունակ բնակչության թվի նվազումը և գործազուրկների թվի աճը ղացատրվում է եանրա-պեաության էներգեսիկ ճգնաժամով, աղյուներաարտադրական ձեռնարկություն-ների միջև գոյություն ունեցող կապերի խզումով ու պաեերազմական իրադրությամբ: Երկրորդ փուլն ընդգրկում է 1995-97թթ, երբ աշխատունակ բնակչության թիվը նվա-զել է 11.4 եազարով, իսկ գործազուրկների թիվն ավելացել է 24 եազարով: Այս փուլում աշխատունակ բնակչության թվի նվազումը և գործազուրկների թվի կտրուկ աճը եիմ-

¹⁰ А. Н и к и ф о р о в, Рынок труда: занятость и безработица, М., 1991, стр. 26.

¹¹ Գյուղրու զբաղվածության արածքալին կենարոնի տվալներ:

¹² А. Н и к и ф о р о в, նշվ. աշխ., էջ 28:

նակաճան՝ բացատրվում է քաղաքի արդյունաբերաարասպրակուն ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացով: Օրինակ, Գյումրու երուշակեղենի կոմբինատում մինչև Մայիսի երկրաշարժը աշխատողների թիվը 177 էր, 1996թ.՝ մինչև ձեռնարկության մասնավերջումը՝ 77, իսկ ահա 2000թ. երուշակեղենի կոմբինատում աշխատում էր ընդամենը 13 մարդ, ընդ որում վեցը ինժեներատեխնիկական աշխատողներ էին¹³: Նույնը կարելի է ասել Գյումրու գրեթե բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների մասին, ոչոնցում մասնավերջումից հետո աշխատողների թիվը կարուկ նվազել է:

Երբորդ փոխում՝ 1998-2000թթ, աշխատանակ բնակչության թիվը նվազել է 2 եազարով, իսկ գործազուրկների թիվը՝ 8 եազարով: Ինչպես երկրորդ, այնպես էլ երրորդ փուլում, աշխատանակ բնակչության թվի նվազումը պայմանավորված է մասամբ արդյունաբերաարասպրակուն ձեռնարկությունների սեփականաշնորհմամբ, իսկ գործազուրկների թվի որոշակի նվազումն արդյունք էր 1997թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված գրադվածության մասին նոր օրենքի, որն ավելի դժվարացրեց գործազուրկի կարգավիճակ ստանալը:

Աղյուսակ 3. Գյումրու աշխատանակ բնակչության և գործազուրկների թվի փոփոխությունը 1992-2000թթ.

աարեթվեր	աշխատանակ բնակչություն թիվը (եազ. մարդ)	գործազուրկների թիվը (եազ. մարդ)	գործազ. թիվը առկաեներով ¹⁴		աշխատանքի աեղավորված գործազուրկների թիվը	
			1	2	եարյուր մարդ	%
1992	129	4	3.3	1.9	270	0.2
1993	100.5	9.5	9.4	4.5	343	0.3
1994	80.0	13	16.2	6.2	280	0.3
1995	76.5	23	30.0	10.9	112	0.1
1996	72.1	29	40.2	19.0	18	0.02
1997	68.6	37	53.9	17.5	49	0.07
1998	67.6	25	39.9	11.8	200	0.3
1999	66.7	29	47.7	13.7	500	0.8
2000	65.6	29	53.6	13.7	619	1.1

Գյումրու բնակչության գրադվածության, աշխատատեղերի պսկասի և գործազուրկության հիմնուխնդիրների սրությունը ցայտուն դրսևորում է սասանում, երբ վերլուծության եեք եեթարկում աշխատուծի առաջարկի տվյալները: Ասենք, որ Շիրակի մարզային վիճվարչությունում գրանցված ձեռնարկություններում գրադվածների թիվը չի եամապատասխանում իրակտությունը: Նախ, որ մեկ անձը կարող է աշխատել մեկից ավելի ձեռնարկություններում, մասնավորապես, դրանց թվին կտեբի է դասել անեատ ձեռներեցներին, որոնք եխմնակտում գրադված եե գյուղասանեասկան մթերքների, թեթև արդյունաբերական և այլ սուդրանքների առք ու վաճառքով, ինչպես նաև մտնկավարժներին ու առուջապսևության ոլորտի աշխատողներին: Շիրակի մարզային սոցապաեովագյության հիմնադրամի ավյալներով Գյումրիում անեատ ձեռներեցների թիվը 2000թ. անցնում է 1,4 եազարից:

Հիմնվելով Շիրակի մարզային վիճվարչության ավյալների վրա՝ սայուսակ 4-ում եերկյաջանում եեք գրադվածության թվի ռաշխումն ռաս անաեություն ճյուղերի:

Աղյուսակից երևում է, որ տնաեության մեջ գրադվածների 32.6%-ը արդյունաբերական եամակարգում է աշխատում, ընդ որում վերջին 13 տարիների ընթացքում արդյունաբերության մեջ աշխատողների թիվը նվազել է 8.7 անգամ: Ներկայումս այդ

¹³ Ա. Բ ո յ ա ջ յ ա ն, ԴԷՆ, թերթ 2:

¹⁴ Առաջին սյունակում գործազուրկների առկասը հանված է Գյումրու առկա աշխատունակ բնակչության թվից՝ իսկ երկրորդում՝ մշակական բնակչության թվից:

եամակարգում զբաղված է Գյուճրու առկա բնակչության 3.7% իսկ ընդհանուր բնակչության՝ 2.7%-ը: Համեմատելու համար նշենք, որ այդ թիվը 1987թ. մոտ 23% էր¹⁵:

Աղ. 4. Զբաղվածության թվի թաշխուճը Շիրակի մարզում 2000թ. ապրիլին

	զբաղվածների թիվը	արդյունաբերության մեջ	շինարարության մեջ	առևտրի հաս. սնունդի մեջ	առողջ. ֆիզկ. սոց. ոլորտ	կրթության ոլորտ	մշա - կույթի ոլորտ	կառավարման ոլորտ
1 ք. Գյուճրի	16039	5230	1793	85	2766	4869	1602	294
2 ք. Արթիկ	4144	496	914	175	344	1402	224	247
3 Ախուրյան	3277	607	53	19	379	1840	139	207
4 Ամասիա	754	32	-	53	8	452	76	82
5 Աշոցք	1001	9	-	-	85	566	94	217
6 Անի, Արթիկ	1999	526	216	9	184	804	11	115
ընդամենը	27214	6900	2976	341	3766	9933	2146	1162

Աշխատանքային թվի կտրուկ նվազումը Գյուճրու արդյունաբերական եամալիում, պայմանավորված էր ոչ միայն Մայիսակի երկրաշարժով, այլև նորանկախ Հայաստանի Հանրապետության իշխանությունների որդեգրած՝ տնտեսության զարգացման կապիտալիստական կամ շուկայակետ կացութաձևով: Մեր ուսումնասիրություններով պարզվել է, որ արդյունաբերությունում զբաղվածների 80%-ից սովելին տղամարդիկ են, որոնց ճնշող մեծամասնությունը 40 տարեկանից բարձր է: Ինչպես արդյունաբերությունում, նույնպես էլ կրթական համակարգում իրավիճակը բարվար չէ: Ընդհատ, ներկայումս, ռսա վիճակագրական տվյալների, մանկավարժների թիվը գրեթե երկու անգամ ավելի է ներկայացված քան նախատեսված շրջանի համեմատությամբ, սա անշուշտ, եեականք է այն բանի, որ մանկավարժների զգալի մասը դասավանդում է մեկից ավելի կրթօջախներում: Գյուճրու և ոչ միայն կրթակետ համակարգի առջև այսօր առաջնահերթ ենք եամարում ոչ միայն կրթելու, դպրոցաշինության եինմայնդիորները, այլև տղամարդ մանկավարժներով դպրոցի եամալումը: Քաղաքի մանկավարժների մոտ 80%-ը կանայք են¹⁷:

Տնտեսության մեջ զբաղվածների աեղաշարժերի ուսումնասիրությունը աշխատանքային ռեսուրսների պտտեցիալի գնահատման կարևոր օղակներից է:

Աղյուսակ 5-ից երևում է, որ այդ շարժը 2000թ. ընթացքում ինտենսիվ ընույթ է կրել եակակապես արդյունաբերական ու շինարարական համալիրներում: Եթե առաջինում աշխատանքային շարժի աեակարար կշիւր թացասական է (-913աշխատանք), ապա երկրորդում այն դրական է (+934աշխատանք): Շինարարությունում աշխատողների թվի ավելացումը բացաարվում է այդ բնագավառում աշխատանքների ակտիվացմամբ, ինչը եանգեցրել է աշխատատեղերի պահանջի մեծացմանը:

Աղ.5. Շիրակի մարզում աշխատողների և աշխատանքային շարժը 2000թ.

	աշխատողների թիվը	աշխատանքի տեղավորվածների թիվը	աշխատանքից ազատվածների թիվը	աշխատանքային շարժի փոփոխությունը
ընդամենը	25705	2585	3498	-913
արդյունաբերության	8430	382	1802	-1420
շինարարությունում	2042	1772	838	+934
առողջապահության	3723	273	273	0
կրթություն	10269	56	327	-271
կառավարման ապարատ	1241	26	105	-79

¹⁵ Վ. Ա գ ա տ յ ա ն, Լեմինական, եր., 1988, էջ 56:

¹⁶ Ա. Բ ո յ ա ջ յ ա ն, Դ-ԷՆ, թերթ 2:

¹⁷ Նույն տեղում:

Ի մի ընդհանուր Գյումրու բնակչության 1990-2000թթ. աշխատանքային ռեսուրսների կառուցվածքի ուսումնասիրությունը, կարելի է եզրակացնել, որ ներկայումս նոր աշխատատեղերի ստեղծումը և զբաղվածության արդյունավետ կազմակերպումը անհետաձգելի ու հրատապ խնդիր է քաղաքում, ինչպես նաև ամբողջ մարզում: Բարձրագույն վիճակը կարող է եանգեցնել նրան, որ մտաակա աարհների ընթացքում քաղաքի առկա բնակչության թիվը նվազի ևս մեկ երրորդով:

ОПЫТ АНАЛИЗА ТРУДОВЫХ РЕСУРСОВ И ЗАНЯТНОСТИ НАСЕЛЕНИЯ г. ГЮМРИ В 1990-2000гг.

Резюме

Г.Саргсян, А.Бояджян

Сделана попытка проанализировать динамику изменения трудовых ресурсов и занятости населения города Гюмри в 1990-2000гг. Геополитическая ситуация и экономические реформы привели к тому, что к 2000г. более половины трудоспособного населения-безработные, а 12.5% заняты в разных хозяйственных сферах. В связи с массовой эмиграцией 1992-2000гг. численность трудоспособного населения сократилось до 63.4тыс. человек, а число безработных выросло на 25 тысяч. Как в промышленности, так и в образовании социально-экономическая ситуация неустойчива. Неопределенность в вопросах развития городской экономики может привести к тому, что в будущем численность населения сократится на одну треть. Сегодня самая главная задача-определение путей развития городской экономики, создание рабочих мест и рациональное использование трудовых ресурсов.